**ԳՐԵՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

# ՍՊԱՀԱՆԻ ԱԼԻ ՂԱՓՈՒ ԵՎ ՉԵՀԵԼ ՍՈԹՈՒՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Ալիղափուի բարձունքին թիկնած պալատի հետ միաժամանակ պիտի անհետ կորչեր 17-րդ դարի Սեֆյան նկարիչների ստեղծած մեծ արվեստը, եթե չլիներ Խաչատուրյանի՝ իր իսկ խոսքերով ասած «երեք դար տևող ճնից հին Պարսկաստանի սիրո և հաճույքի աստվածներին արթնացնելու» որոշումը. . .»

Ռուզան Զաքարյան

***Բանալի բառեր՝*** *Ալի Ղափու, Չեհել Սոթուն, Սեֆյան ժամանակաշրջան, Շահ Աբբաս, Սարգիս Խաչատուրյան, պարսկական որմնանկար, վերականգնում, որմնանկարի ընդօրինակություն:*

*Իրանի պատմության մեջ անգնահատելի է շահական Սեֆյան տոհմի կառավարման շուրջ երեքդարյա ժամանակահատվածը: Շահ Աբբասը (1587-1629 թթ.) իր կառավարման սկզբնական շրջանում՝ 1598 թ., Սեֆյան գահանիստը Ղազվինից տեղափոխեց Սպահան, քանի որ միտք ուներ աշխարհաքաղաքական քարտեզում Արևելքն ու Արևմուտքը իրար կապող խոշոր կենտրոն ստեղծել՝ միաժամանակ ձևավորելով մշակութային հզոր միջավայր*[1]*: Սա մի քայլ էր, որը տասնամյակներ անց որոշ պատմագիրների կողմից ստացավ «Սպահանյան վերածնունդ» պատվանունը, կապվելով Շահ Աբբասի անվան հետ:*

*XVI դարավերջին Սպահանի մայրաքաղաք հռչակվելուց հետո հիմք է դրվում շահական պալատների շինարարությանը: Եվրոպացի ճանապարհորդների վկայությամբ՝ XVI-XVII դարերում Պարսկաստանի Թավրիզ և Սպահան քաղաքների մի շարք պալատներ և հասարակական շենքեր աչքի են ընկել իրենց*

---

[1] **Rudi Matthee**, “Safavid Iran through the Eyes of European Travelers”, *Harvard Library Bulletin*, spring-summer, 2012, vol. 23, numbers 1-2, pp. 10-12:

նկարազարդումներով և հարուստ որմնանկարներով: Յավոք, տասնյակ պալատներից շատ քչերին է բախտ վիճակվել պահպանել ժամանակի շունչն ու գեղագիտական միտքն իր մեջ ամփոփող արվեստի գործերը, որոնցից առավել կարևոր նշանակության առաջին շինություններն էին Ալի Ղափու և Չեհել Սոթուն պալատները՝ երկուսն էլ կառուցված Շահ Աբբաս I օրոք:

XVII դարասկզբին Շահ Աբբասի գլխավոր հովանավորությամբ ու կարգադրությամբ սկսվում են Չեհել Սոթուն[2] պալատի կառուցման աշխատանքները: Այն դարձավ տարբեր երկրներից ժամանած հյուրերի և դեսպանների ընդունելության վայր: Պալատը տեղակայված է Սպահանի գլխավոր Նախշ-է Ջահան հրապարակի արևմտյան կողմում՝ զբաղեցնելով 280×180մ տարածք: Ի սկզբանե կառուցված պալատը Շահ Հուսեյնի (1694-1722) կառավարման օրոք ենթարկվել է մեծ վնասների՝ դառնալով խոշոր հրդեհի զոհ: Այս ամենից հետո շահը խոստացավ վերականգնել պալատը, որը պետք է գերազանցեր նախորդն իր շքեղությամբ[3]:

Չեհել Սոթուն պալատը աչքի է ընկնում ներքին սրահում պահպանված հարուստ որմնանկարներով, որոնք զբաղեցնում են գրեթե ամբողջ տարածությունը: Այս որմնանկարները հարյուրավոր տարիների ընթացքում ձևավորված ավանդույթի շարունակողն են, որում զգացվում է հավերժական երիտասարդության, փառաբանվող գեղեցկության ու սիրո շունչը: Որմնանկարները, ժամանակ առ ժամանակ վերականգնումների ենթարկվելով, հեռացել են իրենց նախնական տեսքից: Արևելագետ Արթուր Ուփամ Փոփը նշում է, որ ընդհանուր հարդարանքում դեռ մնում են կրող պատերի վրայի վեց հսկայական որմնանկարները, որոնց սյուժետային պատկերագրական հիմնական թեման որսն է, ինչն ինքնին արձագանք է մինչ այս շրջանը մեզ հայտնի մանրանկարներում հանդիպող տեսարանների[4]: Ի հակադրություն XVIII դարին բնորոշ և արդեն մշտապես հանդիպող թեմատիկ տեսարանների, ստորին հատվածում ավելանում են դեռևս Սպահանյան մանրանկարչական դպրոցին հատուկ պատկերագրական թեմաներով ներշնչված աշխատանքները, որոնցում առավել ընդգծված արտահայտվում էր սուֆիական շունչը:

Պատմական աղբյուրների վկայությամբ՝ Սպահանի գլխավոր Նախշ-է Ջա-

---

2 Չեհել Սոթուն (պրսկ.՝ քառասուն սյուն) պալատի անվանումը կապվում է պալատի գլխավոր մուտքի առջև կանգնած 15մ երկարությամբ 20 ութանկյուն սյուների հետ, որոնք արտացոլվում են առջևի ջրավազանի մեջ և տպավորություն ստեղծում սյուների՝ կրկնակի թվի:

3 *Persian Fresco Painting, Reconstructed by Mr. Katchadourian from the Seventeenth Century Originals in Isfahan*, MoMA, New York, 1932, p. 16.

4 Նույն տեղում, էջ 6:

*հան հրապարակի հսկայական տարածք զբաղեցնող Ալի Ղափու պալատի կառուցման հիմքը դրվել է 1577 թ., Շահ Իսմայիլ II-ի (1576-1577 թթ.) օրոք, և միայն 1602 թ. է սկսվել պալատի վերակառուցման փուլը[5]: Հայտնի է, որ այս պալատը նույնպես նախատեսված էր շահական արքունիքում պաշտոնական ընդունելությունների կազմակերպման համար:*

*Երկու պալատներն աչքի են ընկել ոչ միայն իրենց ճարտարապետական հորինվածքով, այլ նաև հարուստ որմնանկարներով: Բարեբախտաբար, գտնվել են մարդիկ, ովքեր ժամանակին գնահատել են ոչնչացման եզրին հասնող որմնանկարների հմայքը և անցել ընդօրինակման աշխատանքին: Ողջ ընթացքն ուղեկցվում էր դժվարություններով, սակայն, ինչպես ֆրանսիացի արվեստի քննադատ Անդրե Գոդարն է նշում. «Ալի Ղափուի բարձունքում ես տեսա մի հրաշագործի, որը նկարում էր մեծ արագությամբ, առանց տարակուսանքի, ինչպես Սեֆյան շրջանի նկարիչը կնկարեր իր երևակայությամբ»[6]: Հիշատակված նկարիչը հայազգի Սարգիս Խաչատուրյանն է:*

*1886 թ. Մալաթիայում ծնված ապագա մեծ արվեստագետի կյանքի առաջին տասնամյակներն այդքան էլ բարենպաստ չէին, սակայն, փոքր տարիքում աչքի ընկնելով որպես լավագույն աշակերտ, նա ուղարկվեց Էրզրումի Սանասարյան վարժարան ուսումնառության, որից հետո տեղափոխվեց Հալեպ՝ իր ձեռքը վերցնելով հայկական եկեղեցիների նկարազարդման աշխատանքը: Տեղափոխվեց Պոլիս, այնուհետև Փարիզ, հետո Մյունխեն, որտեղ կատարելագործեց իր նկարչական տաղանդը[7]:*

*Սարգիս Խաչատուրյանի ստեղծագործական գործունեությունը կարող ենք բաժանել երեք շրջանի.*

***Առաջին շրջանում** արվեստագետը հաստոցային գեղանկարների շնորհիվ հավերժացնում է հայ ժողովրդի XX դարասկզբի ողբերգական պատմությունը՝ ստեղծելով «Որբացած երեխաներ», «Հայ որբերը անապատում», «Գաղթ», «Գաղթականների ընտանիք» և նման թեմատիկայով այլ կտավներ: Վերջիններս ցուցադրվեցին Եվրոպայում, ինչի ականատեսներից է եղել նաև Ավետիք Իսահակյանը, որն իր հուշերում գրում է. «Մենք գրչով չենք կարող տալ այն՝ ինչ որ դու անում ես վրձինով...»[8]:*

---

5 https://archnet.org/sites/2712?fbclid=IwAR1SCOfjUyVvmVKLpKOeBNEYkYD6jcMUTLRrPUhzKxBICUa2jrZoAO6PwW0, դիտման օր՝ 10.01.2020

6 **M. Sarkisian**, *The Art of S. Katchadourian*, New York, 1965 October, pp. 5-6:

7 Մանրամասն տե՛ս **Թ. Թորանեան,** *Արուեստի երկու երկրպագուներ. Սարգիս եւ Վավա Խաչատուրեան*, Նիւ Եորք, 1983, էջ 5-12:

8 Նույն տեղում, էջ 4:

***Երկրորդ շրջանում*** *ընդօրինակում և անհրաժեշտության դեպքում վերականգնում է Իրանի XVI-XVII դարերի պալատների որմնանկարները*[9]*:*

***Երրորդ շրջանում*** *արվեստագետը նոր կյանք է հաղորդում Հնդկաստանի V-XII դարերի բուդդայական քարանձավների ու պալատների որմնանկարներին: Այս աշխատանքներից հատկանշական են Աջանտայի հնդկական որմնանկարի ընդօրինակությունը՝ վերնագրված «Մառայի դուստրը «Բուդդայի փորձությունից»», Սիթթանավասալ տաճարի հնդկական որմնանկարի ընդօրինակությունը՝ վերնագրված «Ջրաշուշանների լիճը» և նմանատիպ մի շարք ընդօրինակություններ տարբեր վայրերից:*

*Սարգիս Խաչատուրյանը ցուցահանդեսներով պարբերաբար հանդես է եկել օտար երկրներում: Նա հաճախ կտավներ է նվիրել իր ցուցահանդեսները հյուրընկալած թանգարաններին, որոնց թվում են Լուվրը, Տրոկադերոյի պալատը, Լիոնի Գիմե, Անգլիայի Լեմինգթոն, Գլազգոյի Արքայական, Բեռլինի պետական, Սթոքհոլմի ազգային, Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանները, ինչպես նաև Հնդկաստանի Բոմբեյ և Կալկաթա քաղաքների երկու թանգարանները*[10]*: Այս ամենից անմասն չեն նաև Հայաստանի Ազգային պատկերասրահը և Վենետիկի Մխիթարյան միաբանությունը:*

*Սույն հոդվածում անդրադառնում ենք Սարգիս Խաչատուրյանի՝ Իրանի շահական Ալի Ղափու և Չեհել Սոթուն պալատների որմնանկարների ընդօրինակություններին:*

*Պետական հասարակական գործիչ, դիվանագետ, թարգմանիչ Հովհաննես Խան Մասեհյանի հորդոր-խնդրանքով*[11]*՝ 1929 թ. Խաչատուրյանը մեկնել է Սպահան, նորջուղայեցի պատանիներին նկարչական հմտություններ փոխանցելու:*

---

[9] Սարգիս Խաչատուրյանը Իրան այցելել է երկու անգամ՝ 1929 և 1931 թվականներին: Այս երկու ճամփորդությունները հետք են թողել նրա ստեղծագործական երկրորդ շրջանի ձևավորման վրա: 1929 թ. այցելությունը նշանավորվել է Իրանի հյուսիսային Մազանդարան նահանգի Աշրաֆա քաղաքի Սաիբի պալատի որմնանկարների ընդօրինակություններով, իսկ 1931 թ. այցելությունը՝ Սպահանի շահական Ալի Ղափու և Չեհել Սոթուն պալատների որմնանկարների ընդօրինակություններով: Մանրամասն տե՛ս **Գ. Չեմենյան,** *Սարգիս Խաչատուրյան. Գեղանկար, գրաֆիկա, ընդօրինակություններ,* ՀԱՊ, Երևան 2016, էջ 11: **Ք. Մոքլեր**, «Սարգիս Խաչատուրյանի պարսկական որմնանկարները», *Անահիտ (հանդես մտածման և արվեստի)*, 1935, թիվ 1-2, էջ 63-69: **M. Breuning**, "Sixteenth and Seventeenth Century Frescoes Presented in Sympathetic Reconstruction by Sarkis Katchadourian", *New York Evening Post*, 15.10.1932:

[10] «Սարգիս Խաչատուրյան», *Հայաստանի կոչնակ*, № 41, 1939, էջ 1122:

[11] Սարգիս Խաչատուրյանի՝ դեպի Իրան այցելության մասին հանդիպել ենք երկու տեսակետի: Ըստ մեկի՝ XX դարասկզբին Փահլավիների հրամանով դրվում է վերականգնման աշխատանքների մեկնարկը՝ շեշտը դնելով շահական պալատների վերականգնման գործին: 1930-ական թթ. այլ երկրներից Սպահան են հրավիրվում վերականգնող մասնագետներ, որոնց

*Նա Ս. Ամենափրկիչ վանքին կից բացել է պատանիների համար մի խմբակ։ Լավագույն ուսանողներից էին Երվանդ Նահապետյանը և Սմբատ Տեր-Կյուրեղյանը, որոնք իրենց հուշերում մեծ հարգանքով են խոսում ուսուցչի մասին։ Նահապետյանը նշում է, որ Խաչատուրյանը ժամանակի սղության պատճառով հասցրել է ընդամենը վեց ամիս դասավանդել իրենց, սակայն այդ կարճ ժամանակում նրա տված գիտելիքները հավասարազոր էին չորս տարվա ակադեմիական կրթության, իսկ Սմբատ Տեր-Կյուրեղյանն այն հաջողակ ուսանողներից մեկն էր, որ ճամփորդել ուսուցչի հետ, տասնյոթ տարեկանում լավ տիրապետելով ջրաներկին, բացառիկ առիթ է ունեցել մասնակցելու վարպետի հետ պալատների վերականգնմանն ու ընդօրինակմանը*[12]*։*

*Այս ուղևորության ընթացքում Խաչատուրյանը այցելել է Իրանի տարբեր շրջաններ։ Նա նկատել է պալատների որմնանկարները բավական աղճատված վիճակում՝ ենթարկված հրդեհի, ջրի, ծխի, օդի խոնավության և մի շարք այլ զրկանքների։ Ինչպես Եսթեր Վան Լուն է գրում. «Աւելի շուտ չկային՝ քան թե կային»*[13]*։ Մինչև Խաչատուրյանի այցը, դրանք երբեք չէին վերականգնվել և կարծես լքված վիճակում լինեին։*

*Ալի Ղափու պալատի սրահներից մեկում ուղղանկյունաձև երկու որմնանկարների ընդհանուր հորինվածքային լուծումները մեզ ծանոթ են արդեն Սպահանի մանրանկարչական դպրոցի հիմնադիր Ռեզա Աբբասու բերած նորամուծություններից, որոնք արտացոլանքն են XVII դարասկզբին Շահ Աբբասի վարած քաղաքականության՝ հեռանալ պարսկական ավանդույթներից և հարել եվրոպականին։*

*Որմնանկարներն ի սկզբանե վերնագրված չեն եղել։ Խաչատուրյանը ևս իր ընդօրինակությունները չի վերնագրել։ Այս հարցում մենք օգտվել ենք 1934 թ.*

---

թվում էր նաև նկարիչ Սարգիս Խաչատուրյանը, որին վստահված էր պալատների՝ գրեթե ոչնչացման եզրին հասած որմնանկարների ընդօրինակումը և անհրաժեշտության դեպքում վերականգնումը։ Ըստ մյուսի՝ հրավերն է, որը մեզ ավելի արժանահավատ է թվում։ Մանրամասն տե՛ս **Ռ. Ջաֆարյան**, «Հրաշալիքների աշխարհում», *Սովետական արվեստ*, թ. 7, 1981, էջ 37-41։

[12] **Մեհդի Ալի Ամբարզադե**, «Սարգիս Խաչատուրյան. Սպահանի Ջուղայի նորարար հայ նկարիչը» («Սարգիս Խաչատուրյան. նաղղաշ-է նոավար-է արմանի դար Ջոլֆա-յե էսֆահան»), *ՓԵՅՄԱՆ, Ֆալսնամե-յե ֆարհանգի*, (*ՊԱՅՄԱՆ, մշակութային եռամյա*), Թեհրանի Գրողների Միություն, Թեհրան, աշուն 2013, № 65 (պարսկերեն) էջ 145-155։

[13] **Եսթեր Վան Լու,** «Իսֆահանի որմանկարները» (թրգմ.՝ Ադիբ), *Վերածնունդ հանդես*, 1936, սեպտեմբեր։

Նյու Յորքի Ժամանակակից արվեստի թանգարանում ցուցադրությանն ընդառաջ տպագրված պատկերագրքից[14], որտեղ հեղինակը որմնանկարներին պայմանական անուններ է տվել:

Ալի Ղափու պալատի բաց սրահի ուղղանկյունաձև որմնանկարներից առաջինը (նկ. 1) իր գեղանկարչական լուծումով հարում է պարսկական մանրանկարչական ավանդույթին (հմմտ. նկ. 3, 4, 5), սակայն աննախադեպ մեծ չափերի շնորհիվ դարձել է մոնումենտալ հարդարանքի բաղկացուցիչ մաս:

Սարգիս Խաչատուրյանի ընդօրինակությունը վերնագրված է «Փետուրով գլխարկ» (նկ. 2): Այն բնօրինակի համեմատ փոքր է: Ուշադիր զննելիս նկատում ենք, որ Խաչատուրյանը կարծես որոշակի բնավորության գծեր է հաղորդել պատկերին՝ առավել արտահայտիչ դարձնելով կնոջ դիմագծերը, շեշտելով դեմքի մանրամասները: Այնուամենայնիվ, Խաչատուրյանի տարբերակը վարպետությամբ զիջում է բնօրինակին, որն աչքի է ընկնում նրբին վրձնահարվածներով ու մանրակրկիտ պատկերված դետալներով, ինչը ժառանգությունն է պարսկական մանրանկարչական ավանդույթների:

Անդրադառնանք Ալի Ղափու պալատի բաց սրահում նախորդ որմնանկարին կից գտնվող և գրեթե նույն հատկանիշներով աչքի ընկնող հաջորդ որմնանկարի (նկ. 6) ընդօրինակությանը: «Ամոթխածը» պատկերի ընդօրինակությունը (նկ. 7) չափսերով ևս զիջում է բնօրինակին: Մեկ ամբողջական կերպարի պատկերումը շահական պալատներում սկսվել է հենց Սեֆյան շրջանից, երբ արվեստում տարածում է գտել մարդակենտրոնության գաղափարը, և պալատի պատերին զետեղված նման թեմատիկ պատկերները սկսել են ազատվել զուտ մանրանկարը զարդարող գործառույթից: Սարգիս Խաչատուրյանի ընդօրինակության նկատելի է ոչ միայն նրա ձեռագրին բնորոշ բնօրինակից շեղումն ու դեմքի փոքր-ինչ այլ վերարտադրումը, այլ նաև որոշակի դետալների ավելացումը՝ գծավոր գոտու, ստորին աջ եզրում պատկերված անոթի և որպես ֆոն ծառայող բուսական մոտիվների տեսքով:

Հայտնի է, որ Ալի Ղափու պալատում Խաչատուրյանը բազմաթիվ ընդօրինակություններ է արել, սակայն այժմ այդ գործերի մասին տեղեկությունները խիստ սակավ են, ցավոք, չկան նաև լուսանկարներ: Իր կատարած աշխատանքի մասին նկարիչը գրում է. «Ուրախ եմ յայտնելու, որ Հայոց անունը ընդմիշտ կապուած պիտի մնայ Սաֆավեան արուեստին»[15]:

---

[14] Persian Fresco Painting, reconstructed by Mr. Katchadourian from the Seventeenth Century Originals in Isfahan, MoMA, New York, 1932.

[15] **Հ. Աճեմյան**, «Հայ նկարիչը և Սաֆավի արվեստը», 1932, ՀԱՊ հուշաձեռագրային բաժին, ֆ-70, տ-2, թղ-5, ի-19846:

*Համեմատության համար նշենք, որ ժամանակի հայ արվեստագետներից ոչ բոլորն են գնահատել Խաչատուրյանի հսկայական աշխատանքը: Օրինակ՝ Ռաֆայել Շիշմանյանն իր աշխատության մեջ գրում է. «Նա նետվեց հնախուզական արշավանքների մեջ..., որոնք նկարչի թանկագին ժամանակն ու առողջությունը սպառեցին: Արդարև, Շահ Աբբասի ժամանակից մնացած պարսկական որմնանկարները վերարտադրելիս Խաչատուրյանը, թեև ցույց տվեց գուաշի մեջ ունեցած արտակարգ ճարտարությունը, բայց ստեղծագործական որևէ լուրջ արժանիք չկարողացավ հայտնաբերել ոչ որպես արվեստագետ և ոչ էլ որպես հնախոս, այդ ճյուղում չունենալով հարկ եղած հմտությունն ու գիտական պաշարը»*[16]*:*

*Սույն հետազոտությամբ կարևորելով Խաչատուրյանի ընդօրինակման նվիրական աշխատանքը՝ անդրադառնանք Չեհել Սոթուն պալատի որմնանկարների առանձնահատկություններին: Արևմտյան գիտնականները նշում են, որ այս որմնանկարների գեղարվեստական արժեքն այդքան էլ բարձր չէ, և ամբողջ հետաքրքրությունն ընդունելությունների սրահի պատերին գտնվող քսան փոքրիկ տեսարաններն են, որոնցում զգացվում է մանրանկարչության ազդեցությունը*[17]*:*

*Չեհել Սոթուն պալատի գլխավոր սրահի ստորին գոտու որմնանկարների զգալի մասը պատշաճ ուշադրության չի արժանացվել: Խոսքը սրահի յուրաքանչյուր կողմում երեքական՝ հաջորդականությամբ տեղակայված վեց մեծադիր որմնանկարների մասին է*[18]*: Այս մեծածավալ հորինվածքներն իրենց գեղարվեստական հարդարանքով, ռազմի ու մենամարտի բազմաֆիգուր տեսարաններով, առաջին հայացքից գրավում են այցելուի ուշադրությունը: Այդ է պատճառը, որ ստորին եզրագոտու պատկերների մասին քիչ է խոսվում պատմական վկայություններում:*

*Այս գործերից միայն երեքի ընդօրինակությունների լուսանկարներն ենք կարողացել գտնել: Դիտարկենք «Նախապատրաստվելով տոնին» աշխատանքը (նկ. 8): Խաչատուրյանի գործերի հաջողությունը պայմանավորված է բնօրինակ աշխատանքների հետ տեղում ծանոթանալու և մինչ այդ արված լուսանկարների մանրամասն ուսումնասիրման փաստով: Նա փորձել է հնարավորինս հավատարիմ մնալ բնօրինակներին և ճշգրիտ ընդօրինակություններ անել: Այս ընդօրինակությունը (նկ. 9), ի տարբերություն նախորդների, առանձնանում է մանրամասների հանդեպ հատուկ ուշադրությամբ. պատկերված են որպես ֆոն*

---

[16] **Ռ. Շիշմանյան**, *Բնանկարն ու հայ նկարիչները*, Երևան, 1958, էջ 341:

[17] **S. Stelling-Michaud and J. Daridan**, "La Peinture Séfévide au Tchehel Soutoun, a Ispahan", *Revue des arts asiatiques*, vol. 6, № 4 (1929-1930), p. 256:

[18] **Էփհամ Փոփ**, «Պարսկական նկարչությունը», *Ալիք հանդես*, № 36(84), Թեհրան, 1932, էջ 25:

ծառայող բնությունը, ստորին աջ եզրի անոթների դետալները: Որոշակի վրձնահարվածներով դեմքն օժտվել է հուզականությամբ:

Գրեթե նույն հատկանիշներով աչքի է ընկնում «Մատռվակը» որմնանկարի (նկ. 10) ընդօրինակությունը (նկ. 11): Այստեղ երկկերպար հորինվածքից Խաչատուրյանն առանձնացրել է մեկին և ընդօրինակել՝ իր ձեռագրին բնորոշ մանրամասների հանդեպ ուշադրությամբ: Կենտրոնական դերում ծառի հովանու ներքո, դեպի գինու սափորներն ուղղված գինի մատուցող անձն է: Բնօրինակի հետ համեմատ այս կերպարը ստացել է կանացիակերպ դիմագծեր:

«Գեղեցկություն» որմնանկարը (նկ. 12), կարծես, տարբերվում է նախորդներից՝ մինչ այժմ մեզ չհանդիպած պատուհանով և խորքում պատկերված բնապատկերով: Խաչատուրյանի ընդօրինակության (նկ. 13) առիթով նշենք, որ, չնայած երկիրն օր օրի դեպի եվրոպականացումը տանող Շահ Աբբասի համառ քայլերի և արվեստագետներին տրված ազատ ստեղծագործելու հնարավորության, այս աշխատանքներում նկատելի է պարսկական արվեստին բնորոշ վերացականությունը, մի տեսակ անկենդան կերպարները՝ որպես հետևանք իսլամից «ճնշված» արվեստագետների կաղապարված լինելուն: Խաչատուրյանը, թեպետ հավատարիմ է մնացել բնօրինակներին, իր ավելացրած որոշ մանրամասներով կարծես կոտրել է այդ վերացականությունը:

Ամփոփելով նշենք, որ իր այս ընդօրինակություններով Սարգիս Խաչատուրյանը մի նոր էջ բացեց պարսկական արվեստի ճանաչման գործում: Արվեստագետի վաստակը պալատների որմնանկարչական հարդարանքի վերհանումն ու տարածումն է: Խաչատուրյանի ընդօրինակություններն այժմ էլ չեն կորցրել իրենց արդիականությունը՝ հանդիսանալով հիմք և վստահելի սկզբնաղբյուր ներկայիս վերականգնողների համար:

Համեմատելով որմնանկարները ընդօրինակությունների հետ՝ նկատեցինք, որ բնօրինակից որոշակի շեղումներ կային, որոնցով հեղինակը փորձել է ամբողջացնել պատկերը: Սա պայմանավորում ենք նրանով, որ Խաչատուրյանի արվեստը համահունչ է իր ժամանակի պարսիկ նկարիչների մղումներին: Նրանք սկսել էին պատկերել իրենց ժամանակակիցներին, անգամ եվրոպացիների, ինչն աննախադեպ երևույթ էր պարսկական նկարչության մեջ: Այս ամենը հաշվի առնելով է, որ Խաչատուրյանի ընդօրինակությունները արժանանում են կրկնակի ուշադրության:

«Երբ Սարգիս Խաչատուրյանը վերականգնում է Շահ Աբբասի ժամանակաշրջանի որմնանկարները, նա վերականգնում է Շահ Աբբասի ժամանակաշրջանն ու վեհ պատկերները»[19]:

---

[19] **St. Kramrich**, *S. Kathchadourian,* Calcutta, 1938, March 20, p. 1.

**GRETA GASPARYAN**

## SARKIS KHATCHADOURIAN'S COPIES OF THE FRESCOES IN ALI QAPU AND CHEHEL SOTOUN PALACES OF ISFAHAN

**Keywords:** Ali Qapu, Chehel Sotoun, Sefevid period, Shah Abbas, Sarkis Katchadourian, Persian frescoes, copying of a fresco, reconstruction of a fresco.

The role of the three-century-long rule of the Sefevid dynasty is vital in the history of Iran. At the beginning of his reign (in 1598) Shah Abbas moved the capital from Qazvin to Isfahan in order to establish a large center with rich cultural environment for connecting the East and West. Then started the construction of palaces among which Ali Qapu and Chehel Sotoun were of primary importance.

In the early 20th century, the Pahlavis initiated the restoration of the palaces. In the 1930s, specialists were invited to Iran, one of them being painter Sarkis Katchadourian. He was responsible for the copy and, in case of necessity, for the restoration of the frescoes that were almost on the verge of destruction. The work lasted for several years, which enabled Katchadourian to exhibit his copies in a number of museums all over the world.

This article discusses Katchadourian's works of the Isfahan period. Five compositions are analyzed, and the painter's copies are compared with the extant originals.

**ГРЕТА ГАСПАРЯН**

## САРГИС ХАЧАТУРЯН: КОПИИ ФРЕСОК В ДВОРЦАХ АЛИ КАПУ И ЧЕЕЛ СОТУН В ИСФАХАНЕ

**Ключевые слова:** Али Капу, Чеел Сотун, Сефевиды, Шах Аббас, Саркис Хачатурян, персидские фрески, восстановление, копии фресок.

В истории Ирана неоценима роль трехвекового правления шахской династии Сефевидов. В начале своего правления, в 1598 году, Шах Аббас перенес столицу из Казвина в Исфахан с целью создать крупный центр, связывающий

Восток с Западом, который одновременно обладал бы и богатой культурной средой. После этого началось строительство дворцов, среди которых первостепенное значение получили Али Капу и Чеел Сотун.

В начале XX века, по приказу династии Пехлеви, начинаются работы по восстановлению дворцов. В 1930-е годы в Исфахан были приглашены специалисты по реставрации, среди которых был художник Саркис Хачатурян. Именно ему было доверено копирование фресок, находящихся на грани исчезновения, а в случае необходимости, их восстановление. Работы длились несколько лет, что позволило Хачатуряну выставить свои копии в известных музеях многих стран.

В статье частично освещены произведения Саркиса Хачатуряна исфаханского периода, проанализированы пять композиций, произведен сравнительный анализ работ художника с сохранившимися оригиналами.